

Հոկտ. եւ Նոյ. 1714: Թղթ. Հաճի Յարու-
թիւնի ի Կ.Պոլիս, 20 Հոկտ. 1717, Դիւ.
Մխ. Վենետ.: Սարգիս դպիր Յովհաննէսեանց՝
“Սահէթճի եւ Երեմիա վարդապետքն ուրացան
ի կովին երկարնակաց ՌճԿԳ. Նոյ. Գ. ԴՂԲ.”
Չեռագիր առ Տր. Վ. Թորգոմեանի: Եւ այլք:)
Գէպքիս մանրամասնութիւնքն ծանօթ չեն:

Սարգիս ո՛ւր էր, ի՞նչ եղաւ այնուհետեւ,
անծանօթ էր ցայսօր: Բարեբախտաբար անոր
գրական անընդհատ գործունէութիւնը կ'առաջ-
նորդէ մեզի կենացը մնացեալ արահետը գտնե-
լու: Սարգիս անկէ ետեւ Պոլիս մնացած է եր-
կար ատեն, զղջացեալ, պահուրտած Լատին
կրօնաւորներու քով: Յետոյ Պոլսէն փախած՝
Հոմմ հաստատուած է, ուր եւ կաթողիկէ
հաւատքին մէջ վախճանած է: Իրեն հետ փա-
խած կ'երեւայ նաեւ Երեմիա ի Հոմմ:

1719ին տակաւին Պոլիս կը գտնուէր
Սարգիս. վասն զի Ստեփ. Լեհացոյ թարգմա-
նած “Յովսեպոսի վասն Հրէից Պատերազմին”,
մէկ ձեռագիրը (Էջմիածնի Մատ., Յուլիանոս
Կարենեանց Թ. 1695, նոր Թիւ 1736, էջ 247ա)
ունի հետեւեալ յիշատակարանը, ինչպէս կը
գրէր ինձ Երուանդ Վ. Տէր Մինասեանց Էջ-
միածնէն 2 Յունիս 1908 թուականաւ.

“Գրեցաւ պատմութիւնս Յովսեպոսի ի լաւ
եւ ընտիր օրինակէ թ՝ վին Հայոց ՌճԿԸ (= 1719)
ի Սահէթճուէ ումեմէ անյիշելոյ. սակայն
ինչրեմ՝ յիշել ի Տէր. զի թերեւս աղօթիւք
ձեր ներումն շնորհեսցի ինձ. եւ աւարտեցաւ ի